կթել 'ի բնակչաց աշխարհէն հայոց, այլ ամենայն զոր ինչ անգիտութեամբ անհնարին, ուրեմն արհեստիւ դառնայ դիւրին և հնարաւոր, այս բովանդակն իւրաքանչիւր հատուցանողաց ոչ բերէ ծանդրութիւն իմն նոր, 'ի պատճառս վաղնջոց սովորութեամբ միշտ հատուցեալ այժմ ևս հատուցանեն, և 'ի բնական բնութեամբ ամենայն մարդ ուտէ և ըմպէ և զգենու, և ոչ երբէք կերակուր և ըմպելիք 'ի նախնում ոչ զերծաւ հատուցանելոյ հարկս տասանորդի և զգեստն հատուցանելոյ մաքսս հարիւրին հինգ թող զայսմ ժամանակիս որ գրէ թէ բոլոր աշխարհն հայոց 'ի լծորդութեան ծառայութեան այլ ազգաց հատուցանէ հարկս բուսոց, անկոց այսինքն կերակրոց երիս 'ի մի տասանց, և ոչ պահպանեցեալ տիրաբար զի մնացորդս մնասցէ ժառանգութիւն աշխատողաց եթէ ոչ՝ մնացորդն ևս գող և աւազակք յափշտակեն, և մեք ոչ հարկադրեմք յաւելի քանթէ տասանորդս, և տիրապէս պահպանութեամբ անհոգս ամենայն կասկածանաց առնեմք, նաև երաշխաւոր լինեմք հատուցանելոյ կողոպտեալս, գերեալս և այլն։

'Ի սմայ գտանի միայնակ գին աղի իբր հարկ 'ի վերայ ժողովրդեան, սա ևս ունի բնականապէս պատճառս իւր, նախ ժողովուրդն համեսցի աղիւ Տեառնէ և տանէ իւրեանց զի բառնցի նախատինք հարկապահանջութեան, զի ոչ ոք գտցի